

լուրն զարմացեալ սուլտանին՝ եւ զանգիտեալ եթէ գուցէ եւ զոր կալան կորուսցէ, շատ համարեցաւ զայն, եւ գիտացեալ զի այնուհետեւ անմարթ է առնուլ զԿապան՝ դարձաւ գերութեամբն յերկիր իւր²³⁰:

Ըստ բանից ոմանց՝ ի պատմչաց մերոց այնպէս իմն թուի, եթէ շատացեալ սուլտանին գերութեամբ սպարապետին Հայոց եւ իշխանացն աւագաց, անփոյթ արարեալ իցէ զԿապանաւ. սակայն ոչ թուի հաւանական այսպէս առնել նմա՝ մինչ կայր՝ իվերայ պաշարմանն՝ եւ զօրքն մարտնչէին, եւ դարձան եւս յաղթութեամբ, աւարաւ եւ գերութեամբ, (յորմէ՝ իդէպ էր սրտաբեկ լինել պաշարելոցն եւ թուլանալ, գուցէ եւ լքանիլ), եթէ ոչ ահ եւ խեթ մեծ՝ իվերայ կայր՝ առ չհանել՝ իլլուխ զգործն, մինչ խորտակեալ էր զօրութիւն Հայոց. հարկ ուրեմն է հաւատալ, եթէ եւ նա ըստ ոչ կարծի իւրում ետես զի չէ սպառեալ ոչ զօրութիւն զինուց Լեւոնի եւ ոչ արիւթիւնն ոգւոյն. վասն որոյ ճեպեաց իբրեւ յաղթական եւ ոչ կորակոր դառնալ յետս. յուսալով, (եւ այսմ հաւանիմ եւ ես), զի թէպէտ կարէր Լեւոն զայն արշաւանս առնել, այլ ոչ առժամայն, եւ ընդդէմ աշխարհագումար բանակի սուլտանին ելանել կամ մխիլ՝ իսահմանս Իկոնիոնի. մնայր արծարծելոյ զոգի զօրականին եւ լնլոյ զթիւ պակասելոցն, եւ՝ իդէպ ժամու խնդրելոյ զվրէժ իւր: Վասն այնորիկ եւ ոչ վաղվադեաց խնդրել գերեթափ առնել, այլ մեծոգի գոռոզութեամբ եթող զայնպիսի պիտանի եւ սիրելի անձինս՝ իբանտ եւ՝ իկապանս հակառա-

²³⁰ Պատմիչն Կիլիկիոյ եւ Սմբատ՝ ոչ յիշեն զայս յետին արշաւանս Լեւոնի, այլ Վահրամ, Ժամանակագիրն եւ հին յիշատակագիրն. սա ասէ. «Իսկ արքայն Լեւոն առեալ զմնացեալ զօրս իւր՝ ասպատակեաց յաշխարհն Գամրաց, եւ բազում ոճիրս գործեաց. եւ առեալ զառ եւ զաւար՝ դարձաւ ՚ի Կիլիկիա. զոր լուեալ Քայքաուզն՝ եթող զԿապանն եւ գերկիր թագաւորին, եւ ամթով դարձաւ յաշխարհ իւր»: Ձնոյն գրեալթ ոտնաչափէ առաջինն.

« Արքայն այսու ոչ տխրացեալ,
Եւ ոչ վատթարս ինչ խորհեցեալ.
Այլ զմնացեալսն ժողովեալ՝
Եւ ՚ի Գամիրս ասպատակեալ.
Ըզտուտանին աշխարհ գերեալ՝
Եւ աւարաւ բազմաւ դարձեալ.
Ձհամբաւ չարեացն նա լընեալ
Եւ յիւր աշխարհն անդրէն դարձեալ»:

Պատմիչն մեր չտայ ինչ պատճառս փութով դառնալոյ սուլտանին. իսկ Սմբատ ասէ, ՚ի տեսանէլն զայնքան գերութիւնն բերեալ, գոհութեամբ ասաց, թէ «Այս ինձ հերիք է. եւ չէառ զԿապանն, եւ ելեալ զնաց յաշխարհ իւր»: